ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/05

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6520-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 27.03.2019թ. թիվ 09/373 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 27.03.2019թ. թիվ 09/373 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Սույն թվականի մարտի 6-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, որը գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 19-ի թիվ 6 որոշմամբ ճանաչվել է N 3 և 6 չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղարը 2019թ. մարտի 20-ին ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացրել ընկերությունների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 25-ի թիվ 7 որոշմամբ արձանագրվել է, որ 2019թ. մարտի 25-ին տրված եզրակացության համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /12.03.2019թ./ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը 6-րդ չափաբաժինների մասով գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված շեմը:

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու հայտը, 2019թ. մարտի 20-ին կատարված հարցման և 2019թ. մարտի 25-ին ստացված եզրակացության պատճենները, ընթացակարգի արձանագրությունների պատճենները:»:

3. <u>«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2019թ. գրությամբ դիմել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6520-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին 02.05.2019թ. ուղղված թիվ 19/12 գրությամբ հայտնել է, որ *««Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն մասնակցել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 12.03.2019թ. համաձայն հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի ունեցել է 3001 ՀՀ դրամի հարկային պարտավորություն, որին սակայն գումարվել է 8000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարը, որը ցույց չի տալիս ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգում: Այս խնդիրը հանդիսացել է պատճառ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նախաձեռնված գործընթացին: Գումարը հայտնի դառնալուն պես վճարվել է բյուջե: Նշված խնդրի վերաբերյալ դիմել ենք ՊԵԿ բողոքարկման հանձնաժողովին, որի դրական եզրակացությունը ուղարկվել է Ձեր կառույցին:*

Ցանկանում ենք նշել, որ «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.03.2019թ. թիվ 7 արձանագրությունում սխալ է ներկայացրել մասնակցի 6-րդ չափաբաժնի գնային առաջարկի նկատմամբ առավելագույն թույլատրելի շեմը՝ նշելով 950 ՀՀ դրամ, 9500 ՀՀ դրամի փոխարեն:

Հայտնում ենք մեր դիրքորոշումը չհամաձայնվելով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետ, քանի որ խնդրի պատճառը հանդիսացել է առանձին հաշվառվող դրոշմանիշային վճարը, ինչի վերաբերյալ չենք ունեցել էլեկտրոնային տեղեկատվություն:

Խնդրում ենք Ձեզ չզրկել ընկերությանը գնումների համակարգում աշխատելու իրավունքից և չընդգրկել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու: Խոստանում ենք այսուհետ հետևողական և ուշադիր գտնվել ընկերության պարտավորությունների վճարման ժամկետների նկատմամբ:»

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է նիստերի օրվա ժամի և վայրի մասին, սակայն ընկերություն կողմից որևէ անձ չի ներկայացել նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 2019թ. թվականի մարտի 6-ին

հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 12.03.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն):

Ընկերությունը թիվ 4 հավելվածով նախատեսված գնային առաջարկով թիվ 3-րդ չափաբաժնի համար ներկայացրել է 1 107 000 ՀՀ դրամ, իսկ թիվ 6-րդ չափաբաժնի համար՝ 950 000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման համար նախատեսված գումար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 19-ի թիվ 6 որոշմամբ ճանաչվել է թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (12.03.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 11 003 ՀՀ դրամ գումարի չափով, որի պարտավորությունների չափը 6-րդ չափաբաժինների մասով գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված շեմը:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը թիվ 6-դր չափաբաժնի մասով մերժել:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 12.03.2019թ. դրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գուամրների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը ունի 3001 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.04.2019թ. թիվ 4-6/9840-2019 գրությամբ ներկայացված պարզաբանման համաձայն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն պարտավորությունները կատարելիս առաջնորդվել է բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում

անձնական հաշվի քաղվածքի տվյալնելում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները՝ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելու, իսկ տեղեկանալուն պես այն կատարելու հանգամանքը, առաջարկել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6520-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. … իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (12.03.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 11 003 ՀՀ դրամ:

- «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ

զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (12.03.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է ընդունվեր այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից և համարվեր հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Այս պարագայում անհրաժեշտ է նաև անձանագրել, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ՀՀ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի /12.03.2019թ. դրությամբ/ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը ունեցել է 3001 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչի պարագայում Ընկերության հարկային պարտավորության չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, քանի որ Ընկերությունը 3-րդ չափաբաժնի համար ներկայացրել է 1 107 000 ՀՀ դրամ, իսկ թիվ 6-րդ չափաբաժնի համար՝ 950 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6520-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ